

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ



Մ.Գ.Մանուչարյան
09 հունվարի 2026թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Տիգրան Արմենի Ղլիջյանի «Ագրոլոգիստիկ համակարգի զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Մասնակցում էին՝ Մերի Մանուչարյան՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Լիանա Խաչատրյան՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Եվգենյա Հակոբյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Ռոբերտ Սարինյան՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., Բելլա Գաբրիելյան՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Գևորգ Հարությունյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Գրիգոր Մանուկյան՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Շողեր Պողոսյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Հովհաննես Ասատրյան՝ տնտեսագիտ. թեկնածու:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Լոգիստիկական բազմաբովանդակ է և միավորում է ոչ միայն մատակարարման շղթային տեխնիկական և կազմակերպչական համակարգերը, այլ նաև հանդես է գալիս որպես տնտեսական կառավարման ռազմավարական մեխանիզմ: Լոգիստիկ գործունեությունը մշտապես ուղղված է շուկայի գործընթացների արդյունավետության բարձրացմանն ու ծախսերի օպտիմալացմանը՝ նպաստելով ռեսուրսների առավել ռացիոնալ և նպատակային օգտագործմանը: Ժամանակակից լոգիստիկ համակարգերի հիմքում դրված են այնպիսի մոտեցումներ, որոնք ձևավորում և զարգանում են գիտատեխնիկական առաջընթացի արագ փոփոխվող միջավայրում:

Լոգիստիկ համակարգի գլխավոր գործոնը տրանսպորտային կոմունիկացիոն կապն է, որն ամենաբարդ և ծախսատար ենթաճյուղն է: Տրանսպորտային լոգիստիկ համակարգի զարգացվածությունը պայմանավորված է այդ ճյուղում ներգրավված տրանսպորտային միջոցների բազմազանությամբ, մատակարարման շղթայում բեռնափոխադրումների շարունակականությամբ և արագությամբ, տրանսպորտային ծախսերի օպտիմալ հարաբերակցությամբ, ինչպես նաև երկրի մրցունակության մակարդակով՝ միջազգային հիմնական տարանցիկ ուղիներում: Լինելով լոգիստիկայի բաղադրիչ ճյուղ՝ ագրոլոգիստիկան կենտրոնանում է գյուղատնտեսական արտադրանքի մատակարարման գործընթացների կազմակերպման և օպտիմալացման վրա: Թեև այս ոլորտը բնորոշվում է մի շարք առանձնահատկություններով, այնուամենայնիվ դրա հիմնական մեթոդաբանական ու գործառնական հիմքերը մեծապես համընկնում են ընդհանուր լոգիստիկ համակարգերին բնորոշ սկզբունքների հետ: «Լոգիստիկ համակարգի կարևորությունը պայմանավորված է այն համգամանքով, որ երկիրը մի շարք ապրանքատեսակների մասով դեռևս չունի բավարար ինքնաբավություն: Այդ պատճառով առանձնահատուկ դեր ունի առաջին անհրաժեշտության ագրարային ապրանքների՝ մասնավորապես հացահատիկի, բանջարեղենի, կաթնամթերքի և այլ պարենային մթերքների անխափան ներմուծման ապահովումը, ինչը կարևոր է երկրի պարենային անվտանգության ապահովման գործում: Վերջինովս էլ, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ագրոլոգիստիկ համակարգում առկա մի շարք մատրահրավերները և զարգացման ներուժը, պայմանավորված է ընտրված թեմայի հրատապությունն ու արդիականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության հիմնական նպատակն է բացահայտել Հայաստանի Հանրապետության ագրոլոգիստիկ համակարգի այն հիմնական գործոնները, որոնք ազդում են ագրոլոգիստիկ շղթայի արդյունավետ գործունեության վրա, ինչպես նաև հիմնավորել այդ համակարգի զարգացման հնարավոր ուղիները, հաշվի առնելով երկրի աշխարհագրական դիրքը, առկա ենթակառուցվածքները և միջազգային լավագույն փորձը:

Նշված նպատակին հասնելու համար ատենախոսության շրջանակներում ձևակերպվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝

- վերլուծել ՀՀ ագրոլոգիստիկ համակարգը, դրա գործառույթները և կազմակերպման առանձնահատկությունները,
- գնահատել համակարգի արդյունավետության վրա ազդող հիմնական գործոնները,
- իրականացնել ՀՀ ագրոլոգիստիկ համակարգի տեխնիկատնտեսական գնահատում,
- մշակել տնտեսամաթեմատիկական մոդելներ՝ տրանսպորտային ծախսերի օպտիմալացման նպատակով,
- կատարել կանխատեսումներ բեռնափոխադրման ծավալների վերաբերյալ,
- ձևակերպել զարգացման ռազմավարական ուղիներ՝ հիմնված համաշխարհային լավագույն փորձի և տեղային վերլուծությունների վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Վերլուծելով Հայաստանի Հանրապետության լոգիստիկ համակարգի արդի խնդիրները՝ ատենախոսությունում ներկայացվել են մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթ են հանդիսանում հետևյալները՝

- Հիմնավորվել է Հայաստանի Հանրապետության ագրոլոգիստիկ ենթահամակարգում այլընտրանքային ճանապարհների շահագործման տնտեսական և ռազմավարական արդյունավետությունը:
- Հիմնավորվել է ամերիկյան փորձի օրինակով ֆինանսական հոսքերի անկանխիկ կառավարման և ֆակտորինգային ծառայությունների ներդրման արդյունավետությունը ՀՀ լոգիստիկ համակարգում, ինչպես նաև առաջարկվել՝ բեռնատարների էլեկտրոնային հաշվիչներով վերազինում, միջնորդական ու բրոքերային ծառայությունների ընդլայնում և «բեռնատարների կայանների» մոդելի ներդրում՝ լոգիստիկ ենթակառուցվածքների բարելավման նպատակով:
- Գնահատվել է ՀՀ լոգիստիկ համակարգում երթուղիների օպտիմալացման ազդեցությունը՝ բեռնափոխադրման ծախսերի կրճատմամբ և արդյունավետության բարձրացմամբ:
- Բացահայտվել է ՀՀ բեռնափոխադրման ծավալների փոփոխության ազդեցությունը երկրի ՀՆԱ-ի վրա՝ տնտեսամաթեմատիկական և էկոնոմետրիկ մոդելների կիրառմամբ:
- Իրականացվել է ՀՀ բեռնափոխադրման ծավալների հնգամյա կանխատեսում՝ ընդգծելով զարգացման հիմնական միտումները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ստացված արդյունքները և նորոյթները, արդյունքների գիտագործնական նշանակությունը, հետազոտության շրջանակներում կատարված հրապարակումները, ինչպես նաև հետազոտության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ **«Ազրոլոգիստիկ համակարգի հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը»** գլխում տրվել է ՀՀ լոգիստիկ համակարգի արդի վիճակը, բացահայտվել են առկա հիմնախնդիրները, մասնավորապես՝ դրանց շարքում առանձնացվել են տրանսպորտային ենթակառուցվածքների թույլ ինտեգրացիան, սահմանային անցակետերում մաքսային ընթացակարգերի չափազանց երկար տևողությունը և հնացած լոգիստիկ մեխանիզմների կիրառումը, որոնք սահմանափակում են համակարգի ճկունությունն ու արդյունավետությունը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Ազրոլոգիստիկ համակարգի արդյունավետության գնահատումը և առկա հիմնախնդիրների վերլուծությունը ՀՀ-ում»** գլխում տրվել են ազրոլոգիստիկ համակարգի արդյունավետության գնահատման տնտեսական, քանակական և որակական չափանիշները, ինչպես նաև վերլուծվել և բացահայտվել են դրանց խոչընդոտող գործոններն ու սահմանափակումները ՀՀ-ում:

Ատենախոսության երրորդ՝ **«Ազրոլոգիստիկ համակարգի զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում»** գլխում տրվել է ՀՀ ազրոլոգիստիկ համակարգի տնտեսական գնահատում՝ էկոնոմետրիկ մոդելավորմամբ և միջազգային առաջավոր փորձի համատեքստում առաջարկվել դրա զարգացման հնարավորությունները:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու եզրահանգումներ, որոնք ամփոփված են ատենախոսության **«Եզրակացություններ»** բաժնում:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինչպես ցանկացած գիտական աշխատանք, սույն ատենախոսությունը ևս գերծ չէ որոշակի թերություններից, որոնցից կարևորել ենք հետևյալները.

1. Չնայած ատենախոսությունը վերնագրված է «Ազրոլոգիստիկ համակարգի զարգացման հեռանկարները ՀՀ-ում» և բովանդակության վերնագրերում շեշտադրվում է ազրոլոգիստիկ համակարգը, այնուամենայնիվ ատենախոսությունում գերակշռում է ընդհանուր լոգիստիկ համակարգի ուսումնասիրությունը:

2. Հեղինակը ատենախոսությունում առանձնացրել է 5 գիտական նորույթ, սակայն, մեր կարծիքով, ցանկալի կլիներ, որ դրանք խմբավորվեին, իսկ ներկայացված նորույթներից վերջին երկուսի մասով բացահայտվածի ու կանխատեսվածի հիման վրա ատենախոսությունում առանձնացվեին համապատասխան հիմնավոր առաջարկություններ:

3. Աշխատանքի գիտական արժեքն էլ ավելի կբարձրանար, եթե դրանում ներկայացվեին ատենախոսի կողմից իրականացված հարցումներ լոգիստիկ համակարգի կազմակերպություններին, հետազոտություններ վարորդների շրջանում կամ ենթակառուցվածքներ տնօրինող օղակների շրջանում: Ագրոլոգիստիկ համակարգի տարրերից մեկը սառնարանային տնտեսություններն են, որոնց մասին ատենախոսությունում բավարար անդրադարձ չկա: Ատենախոսը կարող էր վերլուծել դրանց առկայությունը, թողունակությունը, համապատասխանությունը ՀՀ ագրոհամակարգի պահանջներին, դրանց քանակական ու որակական ցուցանիշների դինամիկան: Բացի այդ, ատենախոսը ներկայացնում է առաջարկություններ վարորդների սոցիալական խնդիրների լուծման համար, բայց այդ առաջարկները հիմնավորված չեն շահակիրների՝ վարորդների կողմից: Մյուս կողմից հեղինակը գնահատական չի տալիս. արդյո՞ք այդ առաջարկների արդյունքում չեն բարձրանա բեռնափոխադրման ծախսերը էլ ավելի կրճատելով ՀՀ լոգիստիկ համակարգի մրցունակությունը:

4. Աշխատանքի 3.1 գլխում ատենախոսը իրականացրել է պարզունակ կոռեկցիոն վերլուծություն, գնահատելու լոգիստիկ համակարգը բնութագրող ցուցանիշների միջև փոխկապվածությունները: Աշխատանքը կշահեր, եթե ատենախոսը փոխարենը կիրառեր Գրեյնջերի պատճառականության թեստը, որը ավելի հարմար է նման խնդիրների լուծման համար և բացահայտում է ցուցանիշների միջև պատճառային կապերը, և ոչ թե զուտ կապերի ուղղությունն ու ուժգնությունը:

5. Նույն 3.1 գլխում ներկայացված ռեգրեսիոն մոդելի համար անդրադարձ չի կատարվել մուլտիկոլինեարության, հետերոսկեդաստիկության և մնացորդների ավտոկոռեկցիայի խնդիրներին: Աշխատանքի գիտական արժեքն ավելի կբարձրանար, եթե ատենախոսը անդրադառնար այս խնդիրներին, ինչն էլ ավելի հավաստի կդարձներ մոդելը, քանի որ նույն գլխի սկզբնամասում ներկայացված կոռեկցիոն վերլուծությունը ցույց է տվել, որ մոդելում ներառված անկախ փոփոխականները արդեն իսկ ունեն բարձր կոռելացվածություն, ինչն էլ առաջ է բերում մուլտիկոլինեարության բարձր հավանականություն:

6. Աշխատանքի 3.1 գլխում կատարվել է ՀՀ բեռնափոխադրումների ծավալի կանխատեսում, որն ըստ էության աշխատանքին ոչինչ չի տալիս: Հարց է առաջանում,

թե ստացված արդյունքը ի՞նչ նպատակի է ծառայում, այն դեպքում, երբ ատենախոսը աշխատանքի 132 էջում նշում է, որ կանխատեսվում է լոգիստիկ արդյունավետության ցուցանիշի (LPI) աճ և չի հիմնավորում այդ կանխատեսումը: Հետևաբար տեղին կլիներ, որ կանխատեսման ARIMAX մոդելը կիրառվեր լոգիստիկ արդյունավետության ցուցանիշի, այլ ոչ թե բեռնափոխադրման ծավալի կանխատեսման համար:

7. Աշխատանքում քննարկվում է Կապան-Շվանիձոր-Մեղրի ավտոճանապարհի որպես այլընտրանքային տարբերակի կիրառումը, սակայն աշխատանքում ատենախոսի կողմից այդ առումով որևէ հիմնավորում չկա:

8. Ատենախոսությունում որոշ հղումները չեն համապատասխանում տեխնիկական պահանջներին, դրանք սահմանափակվում են միայն էլեկտրոնային հղմամբ, (բացակայում են հեղինակ, տարեթիվ, վերնագիր, հրատարակություն և այլն), մինչդեռ հղումները պետք է ներկայացվեին այն ձևաչափով, որով տրված են Գրականության ցանկում: Որոշ էջերում առկա են նաև հղումներ (էջ 44, 86, 88 և այլն), որոնց համար խախտված է հղման հերթական համարը կամ էլ տողատակում բացակայում է աղբյուրը: Աշխատանքում բացակայում է ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան վարչությունների հետազոտություններին, ծրագրերին հղումներ: Բացի այդ, գիտական աշխատանքում ընդունելի չէ հաշվարկների համար որպես հիմք ընդունել լրատվական կայքերում գետեղված տեղեկատվությունը (մասնավորապես էջ 112, 113):

9. Ատենախոսությունում առկա են տեխնիկական բնույթի որոշ թերություններ, մասնավորապես՝ տեղ են գտել բազմաթիվ մտքեր, պնդումներ, թվական տվյալներ, որոնք պահանջում են կոնկրետ հղում աղբյուրներին, սակայն դրանց աղբյուրները բացակայում են, հետևաբար կասկածի տակ է դրվում դրանց իսկությունը: Օրինակ՝ ատենախոսը էջ 33-ում նշում է, որ ՀՀ-ում բեռնատարների տեսականին սահմանափակ է ու չի հիմնավորում, թե ինչի հիման վրա է եկել այդ եզրահանգման, կամ էջ 62-ում՝ ավտոպարկը բավականաչափ հին է, կրկին առանց հղման ու հիմնավորման, և այլն: Ցանկալի կլիներ, որ նշված տեղեկատվությունը հիմնավորվեր համապատասխան հղումներով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տիգրան Արմենի Ղլիջյանի «Ագրոլոգիստիկ համակարգի զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը կարելի է որակել որպես ինքնուրույն հետազոտություն, որն ուղղված է Հայաստանի Հանրապետությունում ագրոլոգիստիկ համակարգի զարգացման հեռանկարների բացահայտմանը:

Թեկնածուական ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը, արդյունքները և գիտական նորույթը: Հեղինակի կողմից հրապարակած 7 (յոթ) գիտական հոդվածները համապատասխանում են հետազոտության ուղղվածությանը և խնդիրներին:

Տիգրան Արմենի Ղլիջանի «Ագրոլոգիստիկ համակարգի զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը և դրան համատեղ կազմված սեղմագիրն ու թվով 7 (յոթ) հոդվածների հրապարակումները համապատասխանում են ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ աշխատանքի հեղինակը արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (09.01.2026թ., արձանագրություն թիվ 2):

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ
ավագ գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու**

Շ.Պ.Պողոսյան

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ
գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու**

Հ.Ա.Ասատրյան

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի ՏԻ ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, Շ.Պողոսյանի և նույն ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, Հ.Ասատրյանի ստորագրությունների իսկությունը «հաստատում են»՝

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ
գիտ. քարտուղար,
տնտեսագիտության թեկնածու**

Ե.Ա. Հակոբյան

«09» հունվարի, 2026թ.

